# ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

## ԴԱՍ 2.5. Ադրբեջան: Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները

• • •

***Բնական պայմանները և ռեսուրսները:*** Ադրբեջանի տարածքը մտնում է Առաջավոր Ասիայի մեջ: Տարածքի շուրջ կեսը լեռնային է: Հյուսիսում **Մեծ Կովկասի**, հյուսիս-արևմուտքում՝ **Փոքր Կովկասի** լեռներն են, կենտրոնական մասում՝ **Կուր-Արաքսյան** դաշտավայրը, հարավարևելքում՝ **Լենքորանի** ցածրադիր դաշտավայրն ու **Թալիշի** լեռները, արևմուտքում՝ Հայկական լեռնաշխարհի արևելյան լեռնաճյուղերը: Երկրի ամենաբարձր կետը **Բազարդյուզ** գագաթն է (4466մ) Մեծ Կովկաս լեռնաշղթայի ջրբաժանի վրա, Ռուսաստանի հետ սահմանին: Ամենացածր կետը գտնվում է հարավարևելքում՝ Լենքորանի դաշտավայր-ցածրավայրում (-28մ): Ադրբեջանի ձգվածությունը հյուսիսից հարավ 400 կմ է, արևմուտքից արևելք՝ շուրջ 500կմ:

• • •

Ադրբեջանը աշխարհագրական դիրքի ու բարձրաչափական մեծ տարբերությունների պատճառով աչքի է ընկնում կլիմայի բազմազանությամբ: Լենքորանի դաշտավայրը, Թալիշի լեռների ստորոտները աչքի են ընկնում ***խոնավ մերձարևադարձային կլիմայով***՝ տեղումների տարեկան մեծ քանակությամբ: Սա ցիտրուսների, թեյի մշակության հիմնական շրջանն է: Կուր-Արաքսյան դաշտավայրն աչքի է ընկնում կլիմայի չորությամբ: Տարածված են կիսաանապատները, որտեղ կուլտուր-ոռոգելի հողերը դարձել են Ադրբեջանի պտղաբուծության, բանջարաբոստանային մշակաբույսերի աճեցման հիմնական շրջանը: Հյուսիսարևելքն աչքի է ընկնում չոր մերձարևադարձային պտղատուների մշակությամբ: Լեռնային շրջանները ծառայում են որպես ամառային արոտավայրեր ու սակավ ջերմասեր մշակաբույսերի աճեցման շրջաններ, ինչը նպաստում է բազմաճյուղ գյուղատնտեսության զարգացմանը: Կլիման բնութագրվում է ջերմության առատութ-

յամբ և խոնավության անբավարարությամբ (բացառությամբ Լենքորանի դաշտավայրի):Կլիման փոխվում է հարավարևելքում խոնավ մերձարևադարձայինից մինչև Մեծ Կովկասի ցուրտ լեռնային ձյունամերձ գոտիները:

• • •

Երկաթաքարի պաշարները գտնվում են **Դաշքեսանի** մոտ, մոլիբդենինն ու պղնձահիրաքարինը՝ Նախիջևանում՝ Զանգեզուրի լեռների արևմտյան լանջերին: Ալունիտի պաշարները գտնվում են Գյանջայի շրջանում՝ **Զագլիկի** հանքավայր, բուժիչ ցեխերը՝ Փոքր Կովկասի նախալեռնային գոտում, որտեղ 1960-ական թվականներին հիմնադրվեց **Նավթալան** առողջարանը:

Ադրբեջանի ջրային գլխավոր զարկերակը **Կուր** գետն է՝ **Արաքս** խոշոր վտակով, որոնք ունեն հսկայական ռոգիչ և էներգետիկ նշանակություն: Կուրի վրա կառուցվել է Մինգեչաուրի ջրամբարը՝ համանուն ջրէկ-ով: Ադրբեջանի կենտրոնական շրջաններից սկսած Կուրը գետային փոքր նավերի համար նավարկելի է:

• • •

Առավել տարածված են կիսաանապատային գորշ ու մոխրագույն ինչպես նաև անտառային գորշ, լեռնամարգագետնային սևահողերը, դեղնահողերը (Լենքորանի դաշտավայր): Անտառները զբաղեցնում են տարածքի 10%-ը: Տիրապետում են անապատակիսաանապատային և չոր տափաստանային լանդշաֆտները: